Հանդիպումից հետո տիկին Ռենատա Վեսեցկայի գլխավորած պատվիրակությունն այցելեց Վեհարանի թանգարան, «Ալեք եւ Մարի Մանուկյաններ» գանձատուն եւ Մայր Տաճար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մայիսի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Խորվաթիայի Հանրապետության նախագահ Ստեպան Մեսիչին:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջեւ նախագահների մակարդակով սկսված երկկողմ հարաբերությունների եւ նախանշվող համագործակցության առիթով:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց երկու ժողովուրդների պատմական ընդհանրություններին, նրանց բաժին ընկած փորձություններին: Այս առումով կարեւորվեց ժողովուրդների համագործակցությունը, որպեսզի մարդկության կյանքում ապագայում երբեք չկրկնվեն անցյալի ողբերգությունները:

Հանդիպման ընթացքին խոսվեց հայկական մշակույթի, համաշխարհային քաղաքակրթության մեջ հայ ժողովրդի կարեւոր ներդրման, եւրոպական արժեհամակարգի, ինչպես նաեւ Հայ Առաքելական եւ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ առկա ջերմ կապերի մասին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԻՆ

Մայիսի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Նորվեգիայի Թագավորության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Կնուտ Հոուգին (նստավայրը՝ Մոսկվա):

Նորին Սրբությունը շնորհավորեց դեսպանին նոր նշանակման առիթով եւ վստահություն հայտնեց, որ սա նոր խթան կդառնա հայ-նորվեգական հարաբերությունների առավել սերտացման եւ զարգացման համար: Վեհափառ Հայրապետը, ի դեմս դեսպանի, շնորհակալություն հայտնեց Նորվեգիայի ժողովրդին՝ մեր պատմության դժվարին ժամանակներում հայ ժողովրդին ու Հայաստանին ցուցաբերված աջակցության եւ օժանդակության համար:

Անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայիս գործունեությանը, իր առջեւ ծառացած մարտահրավերներին եւ միջեկեղեցական հարաբերություններին: